



№ 9. ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

Հայոց ազգի մեծագոյն բարերարները

Այս տարի բոլոր երկիրների հայերը տօնում են երկու մեծ գործերի յիշատակը, — 1500 տարի է անցել, ինչ գանձուած են հայոց տառերը, և 400 տարի, ինչ առաջին անգամ տպւեց հայերէն գիրքը:

Մինչև ս. Սահակն ու ս. Մեսրոպը հայերը իրենց եկեղոցիներում կարդում էին յունարէն կամ ասորերէն լեզուներով, թագաւորի դիւանատանը գրում էին նաև պարսկերէն: Գրել կարգալ առհասարակ շատ քչերը գիտէին, և այդ արևեստը համարւում էր դժւար: Հայ երիտասարդները մեծ մասամբ հեռու երկիրներ էին ստիպւած լինում գնալու, Յունաստան կամ Ասորիք, գիր սովորելու համար: Եւ անա Վրդ զարի սկզբում Մեսրոպը (կամ Մաշթոցը) մտածեց. հայերէն գրքեր ունենալ և զրա համար հայոց սեփական գրեր հնարել, որովհետև օտարների այբուբենով չէր կարելի հայոց բոլոր հնչիւնները արտայայտել: Նա ուզում էր որ հայերը հասկանան այն, ինչ որ գրւած է Ս. Գրքի մէջ, և խուլ չը մնան Գրիստոսի խօսքին: Իր միտքը Մեսրոպը յայտ-

նեց իր ժամանակւայ կաթողիկոս ս. Սահակին, որ ինքն էլ վաղուց փափագում էր հայերէն լեզուով գրքեր ունենալ: Նրանք գնացին Վուամշապուհ թագաւորի մօտ. սա էլ ուրախութեամբ ողջունեց նրանց մտադրութիւնը և յայտնեց թէ լաւել է, որ Ասորիքում մի Գանիէլ եպիսկոպոսի մօտ կան հայերէն գրեր: Իսկոյն բերել տւին այդ նշանագրերը և սկսեցին գրքեր թարգմանել: Բայց որքան հրասթափւեցին, երբ տեսան որ այդ գրերով անկարելի է հայոց լեզուի բոլոր հնչիւնները տալ: Մեսրոպը այն ժամանակ, ինքը գնաց Գանիէլի մօտ՝ մի գուցէ մի քանի գրեր նա չէր ուղարկել, բայց որոնած պակաս գրերը նրա մօտ չը գտաւ, և տեսաւ, որ ուրիշ միջոց չը կայ՝ ինքը պիտի հնարի: Երկարնա ազօթում էր, ձգնում, մտածում: Եւ անա մի օր, երբ իր աշխատանքի մէջ խորասուզւած, յանկարծ զլուխը բարձրացրեց, նա տեսաւ պատի վրա մի աջ ձեռք, որ գրում էր... գրում էր այնպէս, որպէս թէ ինքը գրելիս լինէր իր տախտակի վրա. գրում

էր պակաս գրեւը մէկը միւսի ետեւից: Նա իսկոյն ինքն էլ հէնց այդպիսի գրեւն է գծագրում իր տախտակի վրա ու շտապում մի յոյն գիտնականի մօտ, որ յայտնի էր իբրև հմուտ և ճաշակաւոր գծագրիչ: Այնտեղ նրանք միասին վերջնականապէս ձևակերպեցին գրեւը, դասաւորեցին այն շարքով, ինչպէս յունարէն այբուբենն էր դասաւորուած, և որոշեցին որ հայերէն էլ պիտի գրւի ձախից աջ, ոչ թէ աջից ձախ, ինչպէս ասորերէնում էր: Եւ հրճւանքը սրտում՝ Մեսրոպը շտապեց վերագառնալ Վաղարշապատ: Սահակն ու Վռամշապուհը նրան ընդառաջ դուրս եկան քաղաքից շատ հեռու, նախարարների և ժողովրդի բազմութեան հետ: Իսկոյն ամեն կողմից ընդունակ աշակերտներ հաւաքեցին և սկսեցին նորագիւտ գրեւը սովորեցնել և եկեղեցական գրքերը թարգմանել: Ամենից գժւար գործը ընկաւ այժմ Սահակ կաթողիկոսին բաժին, որովհետև նա ամենից լաւ գիտէր յունարէն և համարուում էր առաջին լեզւագէտ: Նա կամ ինքն էր թարգմանում և կամ ինքն էր ուղղում ուրիշների թարգմանածը, իսկ Մեսրոպը երկրի գանազան ծայրերը շրջում էր, դրպրոցներ հիմնում, աշակերտներ ժողովում, ուսուցանում, սովորեցնում էր եկեղեցիներում Աւետարանը հայերէն կարդալ և պատարագը հայերէն անել:

Մայրենի լեզուն հնչեց ամեն տեղ, և նրանք, որոնք ուսման ծարաւ էին, այժմ կարող էին մայրենի լեզուով գրքեր կարդալ, աշխարհի լաւագոյն մարդկանց մտքերն իմանալ, կրթւել, զարգա-


նալ, հասկանալ՝ ինչու են իրենք ստեղծուած, ինչ է պահանջում իրենցից հայրենիքն ու եկեղեցին:

Առաջագէտ աշակերտները ուղարկեցին Յունաստան՝ յայտնի փիլիսոփաներին լսելու համար և վերագառնալով Հայոց աշխարհը՝ ձոխացրին մայրենի գրականութիւնը: Հայոց գրականութիւնը մէկ անգամից այնպէս է ծագուում, որ այժմ այդ ժամանակը «ոսկէ դար» են անւանում: Գրուում էին այն լեզուով, որով խօսում էին, այսինքն այն լեզուով, որ մենք այժմ անւանում ենք գրաբաւ. այն ժամանակ ամենքն այդ լեզուով էին խօսում:

Գրեւր եկան գնացին, շատ լաւ և աւելի շատ սև օրեր են անցել հայ ազգի գլխով. բայց հայոց գիրը և գրականութիւնը միշտ յիշեցրել է հայերին, որ իրենք մի ազգ են, որ իրենց անցեալը ունեն, իրենց հայրենիքի գիտակից զաւակները պիտի լինեն:

Երբ XV-րդ դարում գերմանացի Գուտենբերգը հնարեց տրպագրելու արւեստը, հայերն էլ շտապեցին օգտուել զրանից, և 1512-ին լոյս տեսաւ առաջին տրպագրի հայերէն գիրքը: Այնուհետև տպագրութիւնը միշտ զարգացաւ, գրքերը բազմացան, ս. Մեսրոպի և ս. Սահակի գործը աճեց մեծացաւ, և այժմ լուսաւոր միտքը գրքերի, լրագիրների, թերթերի միջոցով մտնում է ամեն ուսումնարան, ամեն տուն, եկեղեցի, թատրոն...

Ահա թէ ինչու այնպիսի երախտագիտութեամբ այս տարի ամենքս յիշում ենք հայերէն գրի գիւտարարներին և հայերէն գրքի առաջին տպագրիչներին:



Ս. Սահակի